Բաղկացած է 23 էջի
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
« 17 » հունիս 2019թ.
№ 1599 - Ա հրամանով

Առողջապահության նախարար՝
_____ Ա. Թորոսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
05.09.1995թ.
Գրանցման N 264.140. 01712
Վկայական՝ 01Ա 016493
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 00011624
29.04.2002 թ. գրանցված կանոնադրության
փոփոխությունը գրանցված է Հայաստանի
Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից
« 24 » 06 2019թ.

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

2. Ընկերությունը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» պետական ձեռնարկության (ստեղծված հիմնադիր հանդիսացող պետական կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Հիմնադիր) 12 մայիսի 1999 թվականի թիվ 263 հրամանի համաձայն (գրանցման համար՝ № 264. 140. 01712, վկայական՝ 01Ա 016493, 03 սեպտեմբերի 1995թ.), վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում) իրավահաջորդը:

3. Ընկերությունը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 27.12.2000 թվականին, պետական գրանցման համարը՝ 286.120.04083, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 01502205, գտնվելու վայրի հասցեն՝ 0001, ՀՀ, ք. Երևան, Թումանյան 8) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» և «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 852-Ա որոշման համաձայն, «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերությունը «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպման արդյունքում:

«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է ՀԽՍՀ Առողջապահության նախարարության 1956 թվականի սեպտեմբերի 2-ի հրամանի համաձայն և իր հերթին հանդիսանում է Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության կոլեգիայի 1992 թվականի մարտի 2-ի թիվ 9/12 որոշմամբ գրանցված (վկայական № 100) «Առողջապահություն» հանդեսի խմբագրության իրավահաջորդը, վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում:

Ընկերությունը Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի «Ն.Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 1324-Ն որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «Ն.Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 04.07.2012 թվականին, պետական գրանցման համարը՝ 222.120.121236, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00878083, գտնվելու վայրի հասցեն՝ 0040, ՀՀ, ք. Երևան, Աճառյան փող. թիվ 2) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է «Ն.Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«Ն.Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 260-Ա որոշման համաձայն, Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարանի 2012 թվականի հունիսի 8-ի «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունն առանձնացման ճանապարհով վերակազմակերպելու մասին» թիվ 4428-Ա որոշման համաձայն՝ «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 19.03.2004 թվականին, պետական գրանցման համարը՝ 222.120.00271, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 01002597) առանձնացման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան»:

4. Ընկերության իրավունակությունը ծագում է պետական գրանցման և դադարում է լուծարման պետական գրանցման պահից:

5. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքով, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն Կանոնադրությամբ, այլ օրենքներով և իրավական ակտերով:

6. Բաժնետիրոջ (Հիմնադրի) և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն Կանոնադրությամբ: Ընկերությունը պատասխանատու չէ բաժնետիրոջ պարտավորությունների համար:

Ընկերության բաժնետերն Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չի կրում և իրեն պատկանող բաժնետոմսի արժեքի սահմաններում կրում է Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:

7. Ընկերության ֆիրմային անվանումն է.

հայերեն լրիվ՝

ՀՀ ԱՆ «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ

կրճատ՝

«ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝

ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ИНСТИТУТ ЗДРАВООХРАНЕНИЯ ИМЕНИ АКАДЕМИКА С.АВДАЛБЕКЯНА» МЗ РА

կրճատ՝

ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ИНСТИТУТ ЗДРАВООХРАНЕНИЯ»

անգլերեն լրիվ՝

MOH RA "NATIONAL ISNSTITUTE OF HEALTH NAMED AFTER ACADEMICAN S. AVDALBEKYAN'' CJSC

կրճատ՝

"NATIONAL ISNSTITUTE OF HEALTH" CJSC

8. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ *Հայաստանի Հանրապետություն, 375051, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 49/4*

2.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

9. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեությունը (այդ թվում կրթական գործունեություն, գիտական և բժշկական օգնության և սպասարկման աշխատանքների կազմակերպում) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

10. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

1) Բժշկական հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպում,

2) Լրացուցիչ և շարունակական մասնագիտական զարգացման կրթական ծրագրերի իրականացում,

3) Գիտամանկավարժական կադրերի պատրաստում և վերապատրաստում,

4) Դասախոսական կազմի, ինչպես նաև առողջապահության կազմակերպման, ֆինանսավորման, հանրային առողջության մասնագետների պատրաստում և նրանց շարունակական մասնագիտական զարգացման ապահովում,

5) Գիտահետազոտական աշխատանքների իրականացում,

6) Բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում:

7) Բժշկական կանխարգելիչ գործունեության ծավալում:

8) Բժշկական փորձագիտական գործունեության կազմակերպում:

9) Բժշկական խորհրդատվական ծառայության կազմակերպում:

10) Հրատարակչական գործունեության ծավալում և դրա արդյունքում ստեղծված արտադրանքի իրացում:

11) Բժշկական հանրամատչելի գիտելիքների տարածում բնակչության շրջանում, նախաբժշկական օգնության համար անհրաժեշտ կարողությունների ուսուցում, առողջության պահպանման, առողջ ապրելակերպի քարոզչություն:

12) Մասնակցություն առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման և տնտեսվարման ժամանակակից մոդելների, մեխանիզմների ու նորմատիվների մշակմանն ու ներդրմանը:

13) Արտասահմանյան երկրների առողջապահության և այլ հիմնարկների, ընկերությունների, կազմակերպությունների հետ համագործակցություն և փորձի փոխանակում:

14) Առողջապահական հիմնարկներից բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:

15) Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին համաճարակաբանական տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:

16) Բժշկական փորձաքննության իրականացում (այդ թվում, մասնագիտական հիվանդությունների ախտորոշման նպատակով)՝ համապատասխան վերջնական եզրակացությամբ:

17) Գիտական, գիտաբժշկական, կլինիկական, հիգիենիկ և փորձարարական հետազոտությունների իրականացում՝ և ինքնուրույն, և այլ հիմնարկների ու կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերով:

18) Համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացում

11. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Ընկերությունը.

1) Իրականացնում է բժշկական հետբուհական կրթություն, ինչպես նաև լրացուցիչ կրթական և շարունակական մասնագիտական զարգացման ծրագրեր:

2) Մշակում և հաստատում է հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, հրատարակում է ուսումնական գրականություն և ուսումնամեթոդական ձեռնարկներ:

3) Ինքնուրույն որոշում է ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի ու պարբերականության ընտրության հարցերը:

4) Ըստ կրթական ծրագրերի՝ կազմակերպում է դիմորդների, այդ թվում, օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը և ուսումնական գործընթացը:

5) Կազմակերպում է մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման և լրացուցիչ կրթության այլ ծրագրեր:

6) Որոշում է իր կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը՝ օրենքով սահմանված կարգով ստեղծելով, վերակազմակերպելով և լուծարելով ամբիոններ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, այլ կառուցվածքային ստորաբաժանումներ:

7) Իրականացնում է աշխատողների ընտրությունը, նշանակումը և ատեստավորումը, ներառյալ գիտամանկավարժական համակազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական համակազմի, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը:

8) Իրականացնում է աշխատանքներ՝ ուղղված առողջապահության զարգացման հիմնական ուղղություններից և ռազմավարությունից բխող խնդիրների լուծմանը, գիտականորեն հիմնավորում և մշակում է առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման և տնտեսվարման ժամանակակից մեխանիզմների մոդելները, բժշկատնտեսագիտական չափորոշիչները՝ պատրաստելով համապատասխան նորմատիվային փաստաթղթերի նախագծերը:

9) Իրականացնում է գիտական հետազոտություններ և վերլուծություններ:

10) Բնակչության առողջության վիճակի ուսումնասիրության նպատակով անցկացնում է հետազոտություններ և մոնիտորինգ:

11) Ցուցաբերում է գիտամեթոդական և կազմակերպչական օգնություն:

12) Իրականացնում է հրատարակչական, տպագրական գործունեություն, կազմակերպում է գիտագործնական աշխատաժողովներ, սեմինարներ՝ առողջապահության համակարգի զարգացման, գիտական, ուսումնական հարցերի վերաբերյալ:

13) Իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի, հուշագրերի հիման վրա երկկողմանի և բազմակողմանի ուղղակի համագործակցության մեջ է մտնում հանրապետության և օտարերկրյա համալսարանների, գիտական հիմնարկների, պետական մարմինների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, կատարում է տարատեսակ աշխատանքներ (մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, ասպիրանտների ուսուցում, մասնագետների փոխանակում, գիտական, մշակութային-լուսավորչական և այլ գործունեություն, գիտական խորհրդակցությունների ու արշավախմբերի կազմակերպում և այլն):

12. Հիմնադրի համաձայնությամբ Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված և կանոնադրությամբ չսահմանված ցանկացած այլ գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

3.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Ընկերությունն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

14. Ընկերությունը, որպես սեփականություն, ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և

անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ ինչպես ՀՀ դրամով այնպես էլ արտարժույթով:

15. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, ՀՀ զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

16. Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ սահմանափակ թվով անձանց առաջարկել այլ կերպ ձեռք բերել դրանք:

17. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում, դուստր և կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերի:

18. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկներն իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

19. Ընկերությունն իրավունք ունի.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում, արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը:

2) Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում, փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում, արտարժույթով:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր:

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ:

5) Ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ:

6) Ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում, ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում, վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին:

7) Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան՝ իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների:

8) Պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները՝ իրենց մատակարարների և արտադրանքը սպառողների համար:

9) Ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը:

10) Հիմնադրի համաձայնությամբ իր կազմում ունենալ, ստեղծել կլինիկաներ, դուստր և կախյալ ընկերություններ, օգտվել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

20. Ընկերությունը պարտավոր է.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:

2) Օրենքով սահմանված կարգով, ամեն տարի, ելնելով գործունեության հրապարակայնության սկզբունքից, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը:

3) Աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ:

4) Օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատման արդյունքում սեփական սնանկության ճանաչման նպատակով դիմում ներկայացնել դատարան: Ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:

5) օրենքով սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին:

6) Կրել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

21. Ընկերությունը, որպես հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություն, սահմանում է վարչական և գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական (դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ) կազմ՝ գիտական աշխատողներ, ինժեներատեխնիկական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ աշխատողներ:

22. Ամբիոնը (բաժինը, լաբորատորիան) Ընկերության ուսումնագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումն է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող դասախոսներին ու հետազոտողներին:

23. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է մրցութային հիմունքներով, մինչև 5 տարի ժամկետով, Ընկերության Գիտական խորհրդի սահմանած կարգով՝ ամբիոնի կոլեկտիվի երաշխավորության ստացումից հետո, որից հետո Տնօրենի հրամանով նշանակվում է ամբիոնի վարիչ՝ կնքելով աշխատանքային պայմանագիր:

24. Ամբիոնների (բաժինների, լաբորատորիաների) պրոֆեսորադասախոսական կազմն աշխատանքի է ընդունվում մրցութային կարգով, որից հետո կնքվում է աշխատանքային պայմանագիր:

25. Ընկերությունում գործում են գիտահետազոտական կենտրոններ, որոնք Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումներ են, որտեղ գիտական աշխատանք են իրականացնում Ընկերության պրոֆեսորադասախոսական անձնակազմը, գիտաշխատողները, ասպիրանտները, կլինիկական օրդինատորները, հետազոտողները, ուսանողները, ինչպես նաև պայմանագրային կարգով աշխատող այլ անձինք:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

26. Կրթության գործընթացը կազմակերպվում և կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցին և դասացուցակներին համապատասխան:

Ուսանողների ընդունելությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

27. Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հետդիպլոմային ուսուցումն իրականացվում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:

28. Գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել դասախոսները, գիտաշխատողները, ասպիրանտները, հետազոտողները, ինչպես նաև պայմանագրային կարգով հրավիրված այլ մասնագետներ:

29. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրները սահմանվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գիտական աստիճաններ շնորհում են Ընկերությունում գործող Մասնագիտական խորհուրդները՝ հիմք ընդունելով ատենախոսության պաշտպանությունը: Մասնագիտական խորհուրդներն ստեղծվում և գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

30. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել Օրենքով սահմանված չափից:

31. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 309.075.000 (երեք հարյուր ինը միլիոն յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 61 815 (վաթսունմեկ հազար ութ հարյուր տասնհինգ) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5000 (հինգ հազար) ՀՀդրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

32. Հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինն է ՀՀ առողջապահության նախարարությունը:

33. Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

34. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց, և օրենքով ու այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

35. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել Ընկերության

36. բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վաճառված են:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

37. Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ մուծված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել դրամական միջոցների ներգրավման հաշվին:

38. Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած պարտքերի մարման համար:

39. Ընկերությունն իր ամենամյա գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է.

1) Շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում՝ տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր:

2) Իրեն պատկանող կանոնադրական կապիտալի չափից ավելի գույքը կամ դրա մասը փոխանցել կանոնադրական կապիտալ:

40. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը կարող է կատարվել.

1) Բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցմամբ:

2) Բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում, Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

41. Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված կարգով՝ բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Այդ դեպքում ընկերության պարտատերերն իրավունք ունեն պահանջել վաղաժամկետ կատարել կամ դադարեցնել Ընկերության պարտավորությունները և փոխհատուցել իրենց պատճառված վնասները:

Ընկերությունն իրավունք չունի փոքրացնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության նվազագույն կանոնադրական կապիտալից:

Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման պատճառով բաժնետիրոջ վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումից հետո:

7. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

42. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթեր: Ընկերությունն իրավունք ունի թողարկել և տեղաբաշխել միայն սովորական բաժնետոմսեր: Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

43. Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխվում են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:

44. Ընկերության Հիմնադրին Ընկերության պետական գրանցումն իրականացնելուց և բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարելուց հետո Ընկերության կողմից տրվում է բաժնետոմսերի հավաստագիր (սերտիֆիկատ):

45. Բաժնետոմսն անբաժանելի է:

46. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից՝ 1 տարվա ընթացքում:

47. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով: Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարում են լրիվ արժեքով:

48. Ինչպես Ընկերության հիմնադրման, այնպես էլ բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման ժամանակ բաժնետոմսերի դիմաց վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից: Մինչև բաժնետոմսի արժեքի լրիվ վճարումը, բաժնետոմսի սեփականատերը զրկվում է ձայնի իրավունքից:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

49. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ:

50. Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային կապիտալ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

51. Եթե պահուստային կապիտալը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթի 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

52. Պահուստային կապիտալն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթն այդ նպատակին չի բավարարում: Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար (բացի օրենքով սահմանված դեպքերից):

53. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, Ընկերությունը կարող է ստեղծել նաև սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ կապիտալներ:

54. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվետվության տվյալներով՝ ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով:

55. Եթե Ընկերության գոյության երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալից փոքր է, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը:

56. Ընկերության կողմից կանոնադրական կապիտալն օրենքով սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հանգեցնում է Ընկերության լուծարման: Եթե սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացման կամ Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորագրված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարումը դատական կարգով:

8. ՀԻՄՆԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

57. Ընկերության յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

58. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը իրավունք ունի.

1) Մասնակցել Ընկերության կառավարմանը:

2) Ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից:

3) Ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում, ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը:

4) Պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում է ստուգում պահանջող բաժնետերը:

5) Ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի:

6) Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը:

7) Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր:

8) Առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված:

9) Օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը:

10) Օգտվել օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

59.Բաժնետերը պարտավոր է.

1) Մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով:

2) Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ:

3) Չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

60. Բաժնետերը 58 կետով սահմանված իր իրավունքներն իրականացնում է հիմնադիր հանդիսացող պետական կառավարման մարմնի՝ այլ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ սահմանված դեպքերի համաձայն:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Ընկերությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային և (կամ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից:

Ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային և կիսամյակային շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

62. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

Շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

63. Ընկերությունն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե.

1) Լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը:

2) Շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված *անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշներն ի* հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով:

3) Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ դրանից փոքր կդառնա շահութաբաժինների վճարման հետևանքով:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

64. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով) Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:
Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 1 ամսվա ընթացքում:
Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

65. Ընկերության ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Հիմնադրի կողմից (բացառությամբ Օրենքի 77-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի), որը որոշում է.

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը, տեղը և ժամանակը,

2) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում նախագահում է Հիմնադրի կողմից նշանակված անձը:

66. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.

1) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ:

2) Ընկերության վերակազմակերպումը:

3) Ընկերության լուծարումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը:

4) Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը:

5) Բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի մեծացումը:

6) Բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը:

7) Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը և մեծացումը:

8) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը:

9) Ընկերության պահուստային կապիտալի օգտագործումը:

10) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

11) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը:

12) Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը, օրենքով սահմանված գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը , այդ թվում, այլ կազմակերպություններին մասնակցությունը:

13) Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

14) Ընկերության գործադիր մարմնի (տնօրինության, վարչության) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները:

15) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:

16) Ղեկավար պաշտոնատար անձանց, աուդիտն իրականացնող անձի աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

17) Ընկերության կողմից կլինիկաների, դուստր ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը:

18) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը:

19) Ընկերության տնօրենի տեղակալների, վարձատրության, հավելավճարների, պարգևատրման և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների, ինչպես նաև նրանց հետ պայմանագրերի կնքման նպատակահարմարության վերաբերյալ դիրքորոշման ներկայացումը:

20) Այլ հարցեր, որոնք Օրենքով սահմանված են որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասության հարցեր:

67. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է Հիմնադիրը (Բաժնետերերը): Որպես ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներ կարող են ծառայել.

1) ՀՀ առողջապահության նախարարի հրամանները:

2) Լիազոր ներկայացուցչի գրավոր որոշումները՝ սույն Կանոնադրությամբ վերապահված իրավասությունների շրջանակներում:

68. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության Հիմնադիրը կամ նրա կողմից լիազորված անձը՝ Հիմնադրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակում, Ընկերության տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտ իրականացնող անձը:

69. Ընկերության տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտ իրականացնող անձը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

70. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը:

71. Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի իրավասությանը վերաբերող հարցերից: Տնօրենը կազմակերպում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների կատարումը, հաշվետու է նրան և իրավունք չունի Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար պարտադիր որոշումներ կայացնել:

72. Ընկերության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

73. Ընկերության տնօրենը.

1) Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից:

2) Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում:

3) Գործում է առանց լիազորագրի:

4) Տալիս է լիազորագրեր:

5) Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային:

6) Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում, տարադրամային) և այլ հաշիվներ:

7) Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ:

8) Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը:

9) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

10) Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Ընկերության աշխատակիցներին:

11) Աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

12) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում 10.000.000 (տասը միլիոն) դրամը գերազանցող պայմանագրերի կնքումը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության:

74. Ընկերությունում ստեղծում է տնօրենների խորհուրդ (խորհուրդ), որն իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

75. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

2) Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը, օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, այդ թվում՝ այլ կազմակերպություններին մասնակցելը՝ Օրենքով սահմանված դեպքերում,

3) Ընկերության կառավարման մարմինների՝ գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

4) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համաձայնությամբ հաստատումը,

5) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

6) Ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համաձայնությամբ հաստատումը,

7) Պետական բյուջեից կատարվող հատկացումների հետ կապված հարցերի քննարկումը,

8) Ընկերության կողմից վճարովի սկզբունքով իրականացվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկի և տեսակների գների վերաբերյալ որոշումների կայացումը,

9) Ընկերության ստորաբաժանումների աշխատանքների արդյունքների քննարկումը,

10) Ընկերության գործունեության զարգացման ռազմավարության հաստատումը,

11) Ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված այլ հարցերի քննարկումը,

12) այլ հարցեր, որոնք Օրենքով սահմանված են որպես Խորհրդի իրավասություն:

76. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

77. Խորհուրդն ունի նախագահ, որը համակարգում է խորհրդի աշխատանքները, և խորհրդի քարտուղար:

78. Խորհրդի նախագահը և քարտուղարը ընտրվում են խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

79. Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ:

80. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին:

81. Խորհրդի նիստերը կազմակերպում և վարում է խորհրդի նախագահը:

82. Խորհրդի նիստերը արձանագրվում են:

83. Խորհրդի նիստերի արձանագրությունները տրամադրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի անդամներին, վերահսկիչ հանձնաժողովին (հսկիչին), Ընկերության աուդիտ իրականացնող անձին՝ նրանց պահանջով:

11.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

84. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող):

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

85. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) գործունեության կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթերով՝ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կանոնակարգով:

86. Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, նաև՝ Հիմնադրի պահանջով:
Վերստուգող հանձնաժողովը ստուգումների արդյունքներն ուղարկում է Ընկերության ընդհանուր ժողով:

87. Վերստուգող հանձնաժողովն ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի՝ կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության, Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից:
Վերստուգող հանձնաժողովն (վերստուգողը) իրավունք ունի պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարում:
Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, դրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

88. Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) ընտրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով:
Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) հաշվետու են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:
Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի Ընդհանուր որոշմամբ:
Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված, բաժնետիրոջ կամ հիմնադրի կողմից լիազորված ֆիզիկական անձինք:

89. Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

90. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:

91. Ընկերության ամենամյա ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունը պարտավոր է ներգրավել Ընկերության հետ գույքային շահերով չկապված վերստուգիչի (կազմակերպության կամ ֆիզիկական անձ)՝ աուդիտորի (արտաքին աուդիտ): Ընկերության աուդիտն իրականացնող անձն

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն: Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության տնօրենի կողմից, իսկ աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար գումարի չափը որոշվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

92. Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգումը կարող է իրականացվել նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսական և այլ լիազորված մարմինների ծառայությունների կողմից՝ իրենց իրավասության սահմաններում:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

93. Ընկերության Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատումը տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

94. Ընկերության Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ Կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից, իսկ սույն Կանոնադրությամբ սահմանված դեպքերում պետական գրանցումն իրականացնող մարմնին ծանուցելու պահից, սակայն Ընկերությունը և նրա բաժնետերերը նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

95. Ընկերությունը, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել:

Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

96. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս վերակազմակերպված է համարվում Ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

97. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: